



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԱՆԴԱՄԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ
ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարգսյանի և Արմեն Ֆերոյանի,

քննության առնելով անդամավճար վճարելու և վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունների հետ կապված որոշակի արտոնություններ սահմանելու հարցը,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) և կարանտինով պայմանավորված 2020 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում Պալատի կողմից վերապատրաստման դասընթացներն իրականացվել են բացառապես հեռավար ձևով, ինչի հետևանքով տարբեր պատճառներով որոշ փաստաբաններ չեն լրացրել հաշվետու կիսամյակի համար անհրաժեշտ վերապատրաստման նվազագույն ժամաքանակը,

հաշվի առնելով նաև 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրությունը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 11-րդ կետով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով՝ Պալատի խորհուրդը միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Կատարել լրացումներ՝

- 1.1. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-L որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգում՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

1.2. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 22.02.2019թ. 4/11-L որոշմամբ հաստատված «Փաստաբանների վերապարաստման» կարգում՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

- 2.1. 2020 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների համար վերապարաստման դասընթացներին չմասնակցած փաստաբանները կարգապահական պարասխանադրության չեն ենթարկվում.
- 2.2. Անդամավճարի ընթացիկ վճարումից լրիվ մասով ազատվում են այն փաստաբանները, ովքեր ռազմական դրության պայմաններում պարտադիր կամ կամավոր կարգով մասնակցել են զորահավաքի և ռազմական գործողությունների՝ ռազմական գործողությունների ժամանակահատվածով.
- 2.3. Զիջել (ներել) այն փաստաբանների անդամավճարի պարտքը, ովքեր ռազմական դրության պայմաններում պարտադիր կամ կամավոր կարգով մասնակցել են զորահավաքի և ռազմական գործողությունների: Սույն ենթակետում նշված դեպքում անդամավճար չվճարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթներն ենթակա են դադարեցման՝ Պալատի խորհրդի կողմից կարգապահական վարույթը կարճելու կամ Պալատի նախագահի կողմից կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումներն ուժը կորցրած ճանաչելու միջոցով: Փաստաբանների կողմից զորահավաքի և ռազմական գործողությունների մասնակցության փաստը ստուգվում է ֆինանսական տնօրենի կողմից, որի արդյունքում տրամադրվում է տեղեկանք:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

02 հոկտեմբերի 2020թ.
թիվ 19/12-L
ք. Երևան

Հավելված թիվ 1'
 ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
 02.10.2020թ. թիվ 19/12-Լ որոշման



**ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀԻՐԴԻ 26.12.2013Թ. ԹԻՎ 33/6-Լ
 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ԱՆՂԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ, ՄՈՒՏՔԻ ԵՎ ԱՅԼ
 ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԿԱՐԳՈՒՄ
 ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգը լրացնել նոր՝ 14.¹ կետով հետևյալ բովանդակությամբ. **«14.¹ Պալատի խորհրդի առանձին որոշման հիման վրա անդամավճարի ընթացիկ վճարումից լրիվ մասով ազատվում են այն փաստաբանները, ովքեր ռազմական դրության պայմաններում պարտադիր կամ կամավոր կարգով մասնակցել են զորահավաքի և ռազմական գործողությունների՝ ռազմական գործողությունների ժամանակահատվածով:»:**

2. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգը լրացնել նոր՝ 14.² կետով հետևյալ բովանդակությամբ. **«14.² Պալատի խորհրդի առանձին որոշման հիման վրա զիջվում (ներվում) է այն փաստաբանների անդամավճարի պարտքը, ովքեր ռազմական դրության պայմաններում պարտադիր կամ կամավոր կարգով մասնակցել են զորահավաքի և ռազմական գործողությունների: Սույն կետում նշված դեպքում անդամավճար չվճարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթներն ենթակա են դադարեցման՝ Պալատի խորհրդի կողմից կարգապահական վարույթը կարճելու կամ Պալատի նախագահի կողմից կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումներն ուժը կորցրած ճանաչելու միջոցով: Փաստաբանների կողմից զորահավաքի և ռազմական գործողությունների մասնակցության փաստը ստուգվում է ֆինանսական տնօրենի կողմից, որի արդյունքում տրամադրվում է տեղեկանք:»:**

Հայաստանի Հանրապետության
 փաստաբանների պալատի
 խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

Հավելված թիվ 2'
 ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
 02.10.2020թ. թիվ 19/12-Լ որոշման



**ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 22.02.2019թ. 4/11-Լ ՈՐՈՇՄԱՄԲ
 ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ» ԿԱՐԳՈՒՄ
 ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 22.02.2019թ. 4/11-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստման» կարգի **41-րդ կետը լրացնել նոր՝ «ը» ենթակետով** հետևյալ բովանդակությամբ. **«ը. փաստաբաններին, երբ նրանց կողմից վերապատրաստմանը չմասնակցելու հանգամանքը պայմանավորված է հայտարարված արտակարգ կամ ռազմական դրության կամ այլ անկանխելի պատճառով անձանց տեղաշարժի կամ անմիջական շփումների սահմանափակումների հետ, եթե առկա է տվյալ ժամանակահատվածի համար բոլոր փաստաբանների նկատմամբ կարգապահական պատասխանատվության հարց չբարձրացնելու վերաբերյալ Պալատի խորհրդի որոշում:»:**
2. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 22.02.2019թ. 4/11-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստման» կարգի **41-րդ կետը լրացնել նոր՝ «թ» ենթակետով** հետևյալ բովանդակությամբ. **«թ. այն փաստաբաններին, ովքեր ռազմական դրության պայմաններում պարտադիր կամ կամավոր կարգով մասնակցել են զորահավաքի և ռազմական գործողությունների:»:**

Հայաստանի Հանրապետության
 փաստաբանների պալատի
 խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան